ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ 04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 0231 6-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-144-02.11. 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի 2011թ.-ի հոկտեմբեր ամսվա ընդունած որոշումը, արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 2 թերթ.

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

10546-11
07 11 2011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## ՈՐՈՇՈՒՄ

«6» Հոկտեմբերի 2011թ. թիվ 11

### ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՍԱԽԿԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի 29.09.2011 թվականի թիվ 48/5-8455 գրությունը.

Որոշում եմ՝

1. Քաղաքացի Գուրգեն Գրիգորի Սախկալյանի նկատմամբ «Վարչական Իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կիրառել տուգանք նվազագույն աշխատավարձի 50%-ի չափով՝ 500 դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

2011 թվականի հոկտեմբերի «6»
գ.Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«03» Հոկտեմբերի 2011թ. թիվ 12

# ՌՈԶԻԿ ՔԵՐՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ռոզիկ Քերոբի Խաչատրյանի սեպտեմբերի 30-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնքի «Տեր և Տիկին Ղազարյանների անվան» նախադպրոցական ուսումնական հաստատության ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ռոզիկ Քերոբի Խաչատրյանին 2011 թվականի հոկտեմբերի 3-ից տրամադրել իրեն հասանելիք 2011 թվականի ամենամյա արձակուրդը 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռոզիկ Խաչատրյանի բացակայության ընթացքում նրա աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել մանկապարտեզի մանկավարժ-դաստիարակ Նարինե Կարապետյանին:
3. Տնօրեն՝ Ռոզիկ Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի նոյեմբերի 5-ին :
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս.Զեյնալյան/

2011 թվականի հոկտեմբերի «03»
գ.Պտղունք